«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

2016

Մաթեմատիկա, 4-րդ դասարան

Չորրորդ  տարբերակ

1-10-րդ առաջադրանքներում նշի՛ր ճիշտ պատասխանը:

1. Քանի՞ բնական թիվ կա  21-ի և 34  թվերի միջև:

1)10

2)11

3)12

4)13

5)14

2.Տրվածներից ընտրի՛ր այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս ճիշտ անհավասարություն.
587< 5*7

1) 6

2) 4

3) 5

4) 9

5) 0:

3.Գտիր 4718 թիվը 100-ի բաժանելիս ստացված մնացորդը:

1) 1

2) 18

3) 7

4) 718

5) 4000:

4. Եթե Լևոնի, Հրաչի, Ռուբենի տարիքները գումարենք կստանանք 32: Որքա՞ն կլինի նրանց տարիքների գումարը 3 տարի հետո:

1) 35

2)39

3) 38

4) 41

5) 44

5.Նշված կոտորակներից քանի՞սն են անկանոն՝

½ , ¾, 5/5, 9/10, 13/8

1) 1

2) 2

3) 3

4) 4

5) 5:

6.Քանի՞ կիլոգրամ է 2 տ7ց 40 կգ-ը:

1) 27004

2) 2740

3) 7042

4)7240

5) 7420:

7.Ընդգծի՛ր այն տողը, որտեղ բոլոր թվերը զույգ են:

1) 350, 3566, 3670, 3598

2) 4334, 4372, 4351, 8997

3) 1889, 2889, 3889, 4889

4) 7653, 7645, 3746, 9282

5) 7892, 7890, 7892, 7909:

8. Գիրքն ունի 420 էջ: Գայանեն կարդաց գրքի ¾ մասը: Քանի՞ էջ կարդաց Գայանեն:

1) 105

2) 315

3) 560

4) 140

5) 120

9. Որքանո՞վ է 311 և 235 թվերի գումարը մեծ 311-ից.

1) 311
2) 235
3) 546
4) 76
5) 312

10. Գտի՛ր այն բոլոր երկնիշ թվերի քանակը, որոնց միավորը 4 է:

1) 8
2) 9
3)10
4)11
5) 12

11-15 առաջադրանքների ճիշտ պատասխանները գրի՛ր յուրաքանչյուր աշխատանքից հետո նշված տեղում՝ կետերի փոխարեն:

11.Թվային հաջորդականությունը կազմված է հետևյալ կանոնով. առաջին անդամը 20 է, երկրորդ անդամից սկսած յուրաքանչյուր անդամը հավասար է իր նախորդի կրկնապատիկից հանած 10: Գրի՛ր այդ հաջորդականության հինգերորդ անդամը:

Պատասխան՝ Պատ.170

12.Առանց մնացորդի և՛ 2-ի, և՛ 3-ի բաժանվող ամենափոքր թվին գումարեցին առանց մնացորդի և՛ 2-ի, և՛ 3-ի, և՛ 4-ի բաժանվող ամենափոքր թիվը: Ի՞նչ թիվ ստացվեց:

Պատասխան՝ 4

13.

200 + 110 – 75 : 5 = 207 արտահայտության մեջ փակագծեր այնպես դի՛ր, որ ստացվի ճիշտ  հավասարություն:

Պատասխան՝ 200 + (110 – 75) : 5 = 207

14.Ի՞նչ թվանշանով վերջացող թիվ պետք  է գումարել 743-ին, որպեսզի ստացած գումարը  լինի 10-ի բազմապատիկ:

Պատասխան՝ 7

15.Քառակուսաձև հողամասի երեք կողմերը  ցանկապատված են և այդ ցանկապատի երկարությունը 24 մ է: Գտիր այդ հողամասի մակերեսը:

Պատասխան՝ 64$մ^2$

16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն և հիմնավորված ներկայացրո՛ւ առաջադրանքներից հետո նշված տեղում:

16. Երկու հաջորդական բնական թվերի գումարը 1421 է: Գտեք այդ երկու թվերից փոքրը:

Պատասխան՝ 710

1.1421-1=1420

2.1420:2=710

17.Քառակուսու   պարագիծը 88սմ է: Գտիր այն քառակուսու մակերեսը, որի կողմի երկարությունը 2սմ-ով փոքր է տրված քառակուսու  կողմի երկարությունից:

Պատասխան՝400$սմ^2$

1.88:4=22 սմ

2.22-2=20

3.20x20=400սմ